ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 29

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.09.2020Թ. ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող հասարակական 95 քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գին հաստատելու մասին:
2. Ավագանու 07.08.2020թ. թիվ 25 և 27 որոշումները վերանայելու մասին:
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 30

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այգեստան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Այգեստան համայնքի սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության 95 քմ մակերեսով հողամասը մինչև ս/թ հոկտեմբերի 15-ը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի հոկտեմբերի 12–ին ժամը 11.00-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնքի համայնքապետարանում տեղի կունենա համայնքային սեփականություն համարվող հասարակական նշանակության հողամասի աճուրդ-վաճառք:

Աճուրդի է դրվում 1 լոտ հողամաս 95 քմ մակերեսով:

1	Լոտ 01	ծածկագիր	03-011-0049	Հասարակական կառուցապատման	մեկնարկային գինը՝	1140000 դրամ

Սահմանափակումներ չկան:

Մասնակցության վճարը 1000 /մեկ հազար դրամ/:

Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ 5%:

Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի օրվանից երեք օր առաջ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Այգեստանի համայնքապետարան:

ԱՅԳԵՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratay gestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 31

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07.08.2020Թ. ԹԻՎ 25 ԵՎ 27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի 19.08.2020թ. N 01//08079-2020 գրությունը

1. Այգեստան համայնքի ավագանու 07.08.2020թ. թիվ 25 որոշմամբ հղումը լրացնել և <<Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով>> բառերից հետո ավելացնել <<3-րդ ենթակետով>> բառերը:
2. Այգեստան համայնքի ավագանու 07.08.2020թ. թիվ 27 որոշման մեջ 1-ին կետից հետո ավելացնել ՝ օտարման նպատակը գյուղատնտեսական գործունեություն, ժամկետ՝ մինչև ս/թ հոկտեմբերի 15-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratayges tan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 32

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Ավետիսյանի դիմումը

Սեփականության իրավունքով Աշոտ Ավետիսյանին պատկանող 03-011-193-005 կադաստրային ծածկագրով 0,39 հա գյուղ.նշանակության պտղատու այգուց 0,1 հա-ի նպատակային նշանակությունը փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությանը, գյուղատնտեսական մթերքի պահեստ կառուցելու նպատակով:

Հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճար սահմանված չէ:

Կառուցապատում իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի դեպքում, համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված շինարարության թույլտվությունից հետո:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ